

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**2010 թ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ.....	4
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ	7
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ.....	8
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ	9
ԵՎՐՈՊԱ	10
Եվրոպական Միություն	10
Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպություն.....	12
Եվրոպայի Խորհուրդ.....	13
Եվրոպական երկրներ.....	13
ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՆԵՐ.....	14
ՎՐԱՍՏԱՆ.....	14
ԻՐԱՆ.....	15
ԹՈՒՐՔԻԱ.....	15
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ԵՎՐԱԶԵՄ.....	15
ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ	17
ԿԱՆԱԴԱ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ.....	18
ԱՍԻԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ	19
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	20
ՄԱԿ.....	20
ՀՀ մասնակցությունը ՄԱԿ-ի տարբեր մարմիններում	20
Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպություն.....	21
ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....	21
Հայաստան-ՀԱՊԿ.....	22
ՆԱՏՕ.....	22
Մովորական սպառազինությունների վերահսկման խնդիրներ	23
Գլոբալ անվտանգության եւ ոչ կոնվենցիոնալ խնդիրներ	23

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	23
ՍՓՅՈՒՌՔ.....	25
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՈՒՄ	25
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ.....	25
ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	26
ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	26

ՆԱԽԱԲԱՆ

Հանրապետության Նախագահի արտաքին քաղաքականության սահմանած ուղենիշների եւ հանձնարարականների հիման վրա 2010 թվականին արտաքին գործերի նախարարության աշխատանքներն ուղղված են եղել պետության զարգացման արտաքին բարենպաստ պայմանների ապահովմանը, երկրի հեղինակության ամրապնդմանը, արտերկրում Հանրապետության եւ նրա քաղաքացիների շահերի պաշտպանության արդյունավետության բարձրացմանը, միջազգային ասպարեզում Հայաստանի դիրքորոշումների ներկայացմանը, միջազգային կազմակերպություններում եւ գործընթացներում ներգրավվածության խորացմանը, բարեկամ եւ գործընկեր երկրների հետ համագործակցության առավել ամրապնդմանը, ինչպես նաեւ հարաբերությունների կարգավորմանը այն երկրների հետ, որոնց հետ գոյություն ունեն խնդիրներ:

Հայաստանի դիվանագիտության կողմից ձեռնարկված ջանքերի շնորհիվ արցախյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում առավել ակնհայտ դարձավ, որ ՀՀ մոտեցումները համահունչ են միջազգային հանրության դիրքորոշումներին, ինչը արտահայտվեց Աստանայի ԵԱՀԿ գագաթաժողովին ղեկտեմբերի 1-ի հնգակողմ հայտարարությամբ, Մեծ ութնյակի գագաթաժողովի շրջանակներում ԵԱՀԿ ՄԽ համանախագահ երկրների ղեկավարների հունիսի 26-ի Մուսկոկայի հայտարարությամբ, Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահների հոկտեմբերի 27-ի Աստրախանի հռչակագրով, Ալմաթիի ԵԱՀԿ անդամ պետությունների նախարարների հանդիպման շրջանակներում ընդունված Մինսկի խմբի համանախագահ երկրների պատվիրակությունների ղեկավարների հուլիսի 17-ի հայտարարությամբ: Տարվա ընթացքում Հանրապետության Նախագահն այցելեց ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բոլոր մշտական անդամ երկրներ, հանդիպումներ ունեցավ այդ երկրների ղեկավարության հետ:

Անցնող տարին նշանավորվեց հայ-ռուսական դաշնակցային եւ ռազմավարական հարաբերությունների առավել ամրապնդմամբ, որի գագաթնակետն էր Ռուսաստանի Նախագահ Մեդվեդեւի պետական այցը Հայաստան, բանակցությունները Հայաստանի Նախագահ Սարգսյանի հետ, այցի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունները եւ ստորագրված փաստաթղթերը:

2010 թ. որակական նոր մակարդակի բարձրացման Հայաստանի հարաբերությունները Միացյալ Նահանգների հետ, ինչը հատկապես նշանավորվեց Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանի այցելությամբ Վաշինգտոն, հանդիպումով ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հետ, ինչպես նաեւ ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Բլինթոնի երեւանյան այցելությամբ:

Մեկնարկեցին Եվրոպական Միության հետ ասոցացման համաձայնագրի կնքման շուրջ բանակցությունները, որոնցում էական առաջընթաց է արձանագրվել: Դրանց արդյունքում

Էապես նոր հիմքի վրա կորվի Հայաստանի եւ ԵՄ միջեւ համագործակցությունը:
Մերձեցումը եվրոպական ընտանիքին շարունակում է հանդիսանալ Հայաստանի
Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը:

Շարունակվել է բազմաբովանդակ համագործակցությունը հարեւան Վրաստանի ու
Իրանի հետ: Հիմքեր են դրվել այդ երկրների հետ ռազմավարական կարեւորագույն
նշանակության ծրագրերի իրագործման համար:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ Հայաստանի կողմից
վարվող քաղաքականությունը լիակատար ըմբռնում էւ աջակցություն ստացավ
միջազգային հանրության կողմից:

Շարունակվել են նպատակաուղղված քայլերը ասիական երկրների, մասնավորապես՝
Չինաստանի, Հնդկաստանի եւ Ճապոնիայի հետ փոխշահավետ համագործակցության
գարգացման համար:

Տարվա ընթացքում ակտիվ քայլեր են ձեռնարկվել արաբական երկրների հետ
հարաբերությունների գարգացման ուղղությամբ:

Ջանքեր են գործադրվել լատինաամերիկյան երկրների հետ համագործակցության
առավել ընդլայնման ուղղությամբ:

Հայաստանն ակտիվորեն ներգրավված է եղել Հավաքական անվտանգության
պայմանագրի կազմակերպության շրջանակներում ընթացող համագործակցության մեջ,
Երեւանում եւ Սեւանում կայացել են կազմակերպության անդամ պետությունների
ղեկավարների հանդիպումները:

Հայաստանն ինտենսիվորեն մասնակցել է Անկախ պետությունների
համագործակցության եւ ԵՎՐԱՋԵՄ-ի գործունեությանը եւ այդ կազմակերպությունների
շրջանակներում տեղի ունեցող գործընթացներին:

Հաջողությամբ իրականացվել է ՆԱՏՕ-ի հետ Անհատական գործընկերության
գործողությունների ծրագիրը:

Հայաստանը շարունակել է իր մասնակցությունը միջազգային խաղաղապահ
գործողություններին:

Շարունակվել է մասնակցությունը ՄԱԿ-ի եւ միջազգային այլ կազմակերպությունների
գործունեությանը, ակտիվ ներգրավվածությունը ահաբեկչության եւ այլ
մարտահրավերների դեմ միջազգային հանրության պայքարում:

Հարավային Կովկասում կայունության, համագործակցության, անվտանգության ու
խաղաղության հաստատումը հանդիսացել է արտաքին քաղաքականության առանցքային
խնդիրներից մեկը: Հայաստանը ջանքեր է գործադրել կայուն եւ անվտանգ
տարածաշրջանի կայացման գործում:

Արտաքին քաղաքականության տնտեսական բաղադրիչը շարունակել է կարևոր տեղ զբաղեցնել մեր օրակարգում ինչպես առանձին երկրների հետ երկկողմ, այնպես էլ՝ միջազգային կառույցների եւ ֆինանսական ինստիտուտների հետ բազմակողմ դիվանագիտության հարթություններում: Տասնյակ երկրների հետ միջկառավարական առևտրատնտեսական հանձնաժողովների աշխատանքների շարունակման արդյունքում ձեռք են բերվել տնտեսական հետագա համագործակցության ծավալման պայմանավորվածություններ, նախանշվել են նոր ծրագրեր:

Շարունակվել է միջազգային համագործակցությունը մշակութային եւ կրթական ոլորտներում:

Արտգործնախարարությունն իր աջակցությունն է բերել Հայաստանի այլ պետական կառույցներին արտաքին կապերի զարգացման գործում:

Տեղի են ունեցել բազմաթիվ փոխայցելություններ, քաղաքական խորհրդատվություններ, հանդիպումներ եւ միջոցառումներ միջպետական, միջգերատեսչական եւ ապակենտրոնացված մակարդակներով, ձեռք են բերվել պայմանավորվածություններ, կնքվել են շուրջ յոթանասուն միջազգային պայմանագրեր, որոնք լավ հիմք կարող են հանդիսանալ երկկողմ եւ բազմակողմ հարաբերությունների հետագա խորացման համար:

Արտաքին քաղաքականության օրակարգում էր Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչումը: Ցեղասպանության 95-րդ տարելիցի կապակցությամբ շուրջ չորս տասնյակ երկրներում անց են կացվել միջոցառումներ, որոնց իրենց աջակցությունն են ցուցաբերել ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները:

2010 թ. բացվեց ԱԳՆ դիվանագիտական դպրոցը, որը շուտով կտա իր առաջին շրջանավարտներին: Եւ արդեն հայտարարվել է երկրորդ ընդունելությունը:

Փոփոխության ենթարկվեց Դիվանագիտական ծառայության մասին օրենքը, նախարարությունում կատարվեցին կառուցվածքային փոփոխություններ:

Անցած տարի 7 երկրներում բացվեցին ՀՀ դեսպանություններ (Քուվեյթ, Չեխիա, Իսպանիա, Ճապոնիա, Բրազիլիա, Իրաք, Նիդեռլանդներ):

Շարունակվել են աշխատանքները միջազգային հանրային կարծիքի ձևավորման ուղղությամբ: ՀՀ Նախագահն ու արտգործնախարարը ելույթներ են ունեցել աշխարհի հեղինակավոր քաղաքագիտական կենտրոններում, հարցազրույցներ են տվել միջազգային առաջատար լրատվամիջոցներին:

Հանրապետության նախագահը կատարել է 22 օտարերկրյա այց, Հայաստան է ժամանել այլ երկրների 6 ղեկավար: ԱԺ նախագահը 9 այցելություններ է կատարել արտերկիր: Վարչապետը 8 օտարերկրյա այցելություններ է ունեցել, Հայաստան է այցելել օտարերկրյա 3 կառավարության ղեկավար, ԱԳ նախարարը 24 այցելություն է կատարել, Երևան է ժամանել 14 երկրի արտգործնախարար եւ 5 միջազգային կազմակերպությունների ղեկավար:

Ակտիվ եւ նախաձեռնողական արտաքին քաղաքականության շնորհիվ միջազգային ասպարեզում Հայաստանը շարունակեց իր դիրքերի ամրապնդումը՝ որպէս կանխատեսելի եւ վստահելի գործընկեր:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

2010 թ. ՀՀ արտաքին քաղաքականության առանցքային խնդիրը շարունակել է մնալ արցախյան հիմնախնդրի արդարացի եւ միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա կարգավորումը՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ:

Հայաստանի եւ Ադրբեջանի Նախագահների միջեւ շարունակվել են ինտենսիվ բանակցությունները, տեղի է ունեցել երեք հանդիպում ՌԴ Նախագահի նախաձեռնությամբ եւ մասնակցությամբ՝ հունվարի 25-ին Սոչիում, հունիսի 17-ին Սանկտ-Պետերբուրգում եւ հոկտեմբերի 27-ին Աստրախանում:

Նախագահների հանդիպումների միջեւ ընկած ժամանակահատվածում բանակցությունները վարվել են արտգործնախարարների մակարդակով՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների, հատկապէս՝ ՌԴ արտգործնախարարի միջնորդությամբ:

2010 թ. նորից վերահաստատվեցին միջազգային հանրության այն մտտեցումները, որ 2008 թ. արդեն ակնհայտ էին եւ ներառված էին 2008 թ. դեկտեմբերին ԵԱՀԿ-ի 56 նախարարների հայտարարության մեջ Հելսինկիում, ապա 2009 թ. դեկտեմբերին Աթենքում եւ 2010 թ. հուլիսին Ալմաթիում՝ ԵԱՀԿ արտգործնախարարների հանդիպման շրջանակներում եռանախագահող երկրների պատվիրակությունների ղեկավարների արված հայտարարության մեջ:

Կարգավորման հիմքը կազմող միջազգային իրավունքի սկզբունքներն ու հանգուցալուծման որոշ տարրեր արտացոլված էին 2010 թ. Մուսկոկայում՝ նախագահներ Դմիտրի Մեդվեդեւի, Բարաք Օբամայի եւ Նիկոլա Սարկոզիի հայտարարությունում: Կարելոր հանգրվաններ հանդիսացան Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահների կողմից Աստրախանում հոկտեմբերի 27-ին ընդունված հռչակագիրը, Աստանայում դեկտեմբերի 1-ին Միացյալ Նահանգների, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Հայաստանի եւ Ադրբեջանի հնգակողմ հայտարարությունը:

Անցած տարին աննախադեպ էր Ադրբեջանի կողմից ապակառուցողական քայլերի դրսևորումներով՝ շփման գծում սադրանքների կազմակերպում, հրադադարի հաճախակի խախտումներով իրավիճակի ապակայունացման ու ԼՂ հիմնահարցն այլ հարթակներ տեղափոխելու փորձերով:

Հայկական կողմը կարողացել է ԼՂ հիմնահարցի վերաբերյալ իր դիրքորոշման համար ապահովել լայն միջազգային ըմբռնում եւ աջակցություն:

Այսօր բոլոր միջազգային կառույցները, որոնք զբաղվում են Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորմամբ, միջազգային միջնորդներն ունեն այն մոտեցումները, այն դիրքորոշումները, որոնք համահունչ են Հայաստանի դիրքորոշմանը:

ՌՌԻՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ

ՌԴ հետ ռազմավարական գործընկերության եւ դաշնակցային փոխգործակցության զարգացումը 2010 թ. շարունակում էր մնալ ՀՀ արտաքին քաղաքականության կարեւորագույն առաջնություններից մեկը: Երկուստեք քայլեր են ձեռնարկվել հարաբերությունների առավել խորացման, նոր հեռանկարային ծրագրերի մշակման ու իրականացման ուղղությամբ:

Ընթացիկ տարում շարունակվել է բարձր մակարդակով ինտենսիվ քաղաքական երկխոսությունը: Երկկողմ ձեռնարկվել է ՀՀ եւ ՌԴ Նախագահները ունեցել են շուրջ մեկ տասնյակ հանդիպումներ: ՀՀ Նախագահն ու վարչապետը հանդիպումներ են ունեցել Ռուսաստանի Դաշնության վարչապետի հետ:

Օգոստոսի 19-20-ը տեղի ունեցավ ՌԴ Նախագահ Դմիտրի Մեդվեդևի առաջին պետական այցը Հայաստան, որի արդյունքում ստորագրվեցին հինգ կարեւոր երկկողմ փաստաթղթեր, մասնավորապես՝ ՀՀ տարածքում ատոմային էլեկտրակայանի նոր էներգաբլոկներ կառուցելու նպատակով համագործակցության մասին համաձայնագիրը, ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրությունը, որով նախատեսվում է ոչ միայն ռազմակայանի ժամկետների երկարաձգում, այլև ռուսաստանյան ռազմական բազան Հայաստանի զինված ուժերի հետ համատեղ կապահովի Հայաստանի Հանրապետության անվտանգությունը, այդ նպատակների իրագործման համար ռուսական կողմը կաջակցի Հայաստանի Հանրապետությանը ժամանակակից սպառազինություններով եւ ռազմական տեխնիկայով:

Այցի շրջանակներում Գյումրիում ՀՀ Նախագահ Մերժ Սարգսյանի եւ ՌԴ Նախագահ Դմիտրի Մեդվեդևի ներկայությամբ բացվեց հայ-ռուսական բարեկամությունը խորհրդանշող “Պատվո բլուր” հուշահամալիրը:

2010 թ. մայիսի 8-9-ը ՀՀ Նախագահ Մերժ Սարգսյանն այցելեց Մոսկվա՝ ՀԱՊԿ անդամ պետությունների ոչ պաշտոնական գագաթաժողովին եւ Հայրենական Մեծ պատերազմում հաղթանակի 65-ամյա տարելիցին նվիրված տոնական միջոցառումների մասնակցելու նպատակով:

2010 թ. նոյեմբերի 11-ին Երեւանում կայացավ հայ-ռուսական համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովի հերթական նիստը:

2010 թ. հոկտեմբերի 23-24-ը ՀՀ վարչապետ Տ. Սարգսյանը մասնակցեց Եկատերինբուրգում կայացած հայ-ռուսական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 12-րդ նիստի աշխատանքներին:

2010 թ. հունվարի 13-14-ը ՌԴ արտաքին գործերի նախարար Ս. Լավրովը պաշտոնական այցով ժամանեց Հայաստան: Հանդիպումներ տեղի ունեցան ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանի եւ ԱԳ նախարար Է. Նալբանդյանի հետ:

Տարվա ընթացքում շուրջ երկու տասնյակ հանդիպումներ են տեղի ունեցել ՀՀ ԱԳ նախարար Է. Նալբանդյանի եւ ՌԴ ԱԳ նախարար Ս. Լավրովի միջև:

2010 թ. փետրվարի 5-ին աշխատանքային այցով Երեւանում էր գտնվում ՌԴ կառավարության նախագահի առաջին տեղակալ Ի. Շուվալովը:

2010 թ. հուլիսի 9-10-ը ՌԴ տրանսպորտի նախարար, Հայ-ռուսական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Ի. Լեւիտինը աշխատանքային այցով գտնվում էր Երեւանում:

2010 թ. հուլիսի 16-17-ը այցով Հայաստանում գտնվող Ռուսաստանի կառավարության նախագահի տեղակալ Ա. Ժուկովը հանդիպումներ ունեցավ ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանի եւ վարչապետ Տ. Սարգսյանի հետ: Այցի ընթացքում Հայաստանի եւ Ռուսաստանի օլիմպիական կոմիտեները ստորագրեցին համագործակցության մասին համաձայնագիր:

2010 թ. նոյեմբերի 30-ին Երեւան այցելեց ՌԴ Նախագահի աշխատակազմի ղեկավար Սերգեյ Նառիշկինը:

2010 թ. մայիսի 20-21-ը ՀՀ-ում էր գտնվում ՌԴ Օրենքուրդի մարզի նահանգապետ Ա. Չերնիշեւի գլխավորած պատվիրակությունը: Ստորագրվեց համաձայնագիր ՀՀ Արարատի մարզի եւ ՌԴ Օրենքուրդի մարզի միջև տնտեսական համագործակցության մասին:

2010 թ. նոյեմբերի 8-10-ը Հայաստանում գտնվող ՌԴ Ռոստովի մարզի նահանգապետ Վ. Գուլուբեւի գլխավորած պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանի եւ վարչապետ Տ. Սարգսյանի հետ:

2010 թ. հունվարի 29-30-ը պաշտոնական այցով ՀՀ-ում էր գտնվում Մոսկվայի քաղաքապետ Յու. Լուժկովը:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Հաշվետու տարին բեկումնային էր հայ-ամերիկյան հարաբերությունների զարգացման տեսանկյունից: Տարվա ընթացքում ԱՄՆ հետ ծավալվել է բազմաշերտ եւ ակտիվ համագործակցություն: Ինտենսիվորեն շարունակվել են քաղաքական շփումները երկկողմ եւ միջազգային հարթություններում: Զգալի չափով աճել են տարբեր մակարդակի փոխայցելությունները, որոնց ընթացքում քննարկվել է համագործակցությանն առնչվող հարցերի լայն շրջանակ:

Ս.թ. ապրիլին՝ ԱՄՆ նախագահի հրավերով ԱՄՆ էր մեկնել ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը մասնակցելու գլոբալ միջուկային անվտանգությանը նվիրված վաշինգտոնյան

գագաթաժողովին: Վաշինգտոնում հանդիպում է կայացել ԱՄՆ նախագահ Բ. Օբամայի հետ: Երկկողմ հարաբերությունների տեսանկյունից կարելուք իրադարձություն էր նաև ս.թ. հուլիսին ԱՄՆ պետքարտուղարի այցը Հայաստան, որը 1992թ.-ից ի վեր ԱՄՆ նման բարձրաստիճան պաշտոնյայի առաջին այցն էր Հայաստան: ԱՄՆ են այցելել ՀՀ մի շարք այլ բարձրաստիճան պաշտոնյաներ՝ ներառյալ ԱԳ նախարարը, էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարը, էկոնոմիկայի նախարարն ու ֆինանսների նախարարը: 2010թ. ԱՄՆ պետքարտուղարությունից եւ պաշտպանության քարտուղարությունից Հայաստան են այցելել մի շարք պատվիրակություններ: Տարվա ընթացքում շարունակվել են քայլեր ձեռնարկվել հայ-ամերիկյան առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման ուղղությամբ: Այս առումով կարելուք էր 2010թ. նոյեմբերին Երեւանում կայացած հայ-ամերիկյան առևտրատնտեսական հարաբերությունները կանոնակարգող աշխատանքային խմբի հերթական նիստը: Այդ նիստի ընթացքում ստեղծվեցին չորս առանձին հանձնախումբ՝ առևտրի, գյուղատնտեսության, առողջապահության, էներգետիկայի, ջրային ռեսուրսների ոլորտների համար:

Հանդիսանալով Հայաստանի ամենախոշոր նվիրատուն՝ 2010 թ. ֆինանսական տարվա համար օտարերկրյա պետություններին տրամադրվող օգնության շրջանակներում ԱՄՆ-ը ՀՀ-ին հատկացրել է 41 մլն., իսկ Արցախին՝ 2 մլն. դոլար: ԱՄՆ-ը Հայաստանին տրամադրել է 3 մլն. դոլար ռազմական աժանդակություն:

ԵՎԸՈՊԱ

2010 թ. ընթացքում ՀՀ ԱԳՆ կողմից շարունակվել է Եվրոպային մերձենալու Հայաստանի արտաքին քաղաքական ուղեգիծը՝ առաջընթաց արձանագրելով ինչպես բազմակողմ, այնպես էլ երկկողմ ձեռնարկներում:

Եվրոպական Միություն

Եվրոպական Միության հետ համագործակցությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական գերակայություններից մեկը: 2010 թ. նշանավորվել է բարձրաստիճան փոխայցելություններով, ԵՄ հետ ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունների մեկնարկով եւ համագործակցության երեք նոր ենթակոմիտեների հիմնադրմամբ: Կայացել են համագործակցության մարմինների հերթական նիստերը, ինչպես նաև մարդու իրավունքների շուրջ Հայաստան-ԵՄ երկխոսության երկրորդ հանդիպումը:

Մայիսի 25-27-ը ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանն այցելեց Բրյուսել, որի ընթացքում կայացել են մի շարք հանդիպումներ ԵՄ կառույցների ղեկավարների, ինչպես նաև Եվրոպական ժողովրդական կուսակցության նախագահի հետ:

2010 թ. հուլիսի 12-14-ը ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանն այցելել է Բրյուսել, որտեղ հանդիպել է Եվրոպական խորհրդարանի բարձրաստիճան պաշտոնյաների հետ եւ

հանդես է եկել ելույթով Եվրոպական խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում,:

Նոյեմբերի 12-ին կայացել է նաև ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի այցը Բրյուսել, որի ընթացքում, մասնավորապես, ԵՀ առևտրի հարցերով հանձնակատար Կարլ Դե Գուխտի հետ քննարկվել են Հայաստան-ԵՄ ազատ առևտրի գոտուն առնչվող հարցերը: Մարտին Հայաստան այցելեց ԵՄ նախագահող երկրի՝ Իսպանիայի ԱԳ նախարար Միխել Անխել Մորատինոսը, իսկ ապրիլին՝ Եվրոպական հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն, ովքեր հանդիպումներ ունեցան ՀՀ բարձրաստիճան ղեկավարության հետ:

2010 թ. հուլիսի 19-ին մեկնարկեցին Հայաստան-ԵՄ ասոցացման համաձայնագրի բանակցությունները: ՀՀ կողմից բանակցային թիմի համակարգողն է ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը, գլխավոր բանակցողը՝ ԱԳ նախարարի տեղակալ Կարինե Ղազինյանը:

2010 թ. ընթացքում նշանակալի զարգացումներ են տեղի ունեցել Արևելյան գործընկերության իրականացման բազմակողմ հարթությունում: 2010թ. գարնանը եւ աշնանը տեղի են ունեցել Արևելյան գործընկերության շրջանակներում բազմակողմ համագործակցության չորս թեմատիկ պլատֆորմների հերթական նիստերը: Մարտի 2-ին Բուդապեշտում եւ մայիսի 24-ին Լեհաստանի Սոպոտ քաղաքում կայացել են նախարարական ոչ պաշտոնական հանդիպումներ՝ նվիրված Արևելյան գործընկերությանը, որոնց մասնակցել է ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Կ. Ղազինյանի գլխավորած պատվիրակությունը:

2010թ. սեպտեմբերի 17-ին Բրյուսելում տեղի է ունեցել Հայաստան-ԵՄ համագործակցության կոմիտեի 11-րդ նիստը, իսկ դեկտեմբերի 7-ին՝ համագործակցության խորհրդի նիստը: Հայկական պատվիրակությունը գլխավորել է ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը:

Դեկտեմբերի 13-ին Բրյուսելում կայացել է Արևելյան գործընկերության նախարարական երկրորդ հանդիպումը, որի ժամանակ ամփոփվել է ծրագրի իրականացման ընթացքը եւ քննարկվել են 2011 թ. մայիսին Բուդապեշտում կայանալիք Արևելյան գործընկերության գագաթաժողովի հետ կապված հարցերը: Հանդիպմանը մասնակցել է ՀՀ ԱԳ նախարարի գլխավորած պատվիրակությունը:

Ս.թ. դեկտեմբերի 15-ին Երեւանում տեղի է ունեցել Հայաստան-ԵՄ ասոցացման համաձայնագրի բանակցությունների հերթական փուլը:

Դեկտեմբերի 1-2-ը Բրյուսելում կայացել է Հայաստան-ԵՄ խորհրդարանական համագործակցության կոմիտեի 11-րդ նիստը, որին հայկական պատվիրակությունը գլխավորել է ԱԺ եվրաինտեգրման հարցերով մշտական հանձնաժողովի նախագահ Նաիրա Զոհրաբյանը:

Պարբերաբար Հայաստան է այցելել Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչը:

Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպություն

2010 թ. նշանավորվել է տասնմեկ տարի ընդմիջումից հետո ԵԱՀԿ գազաթափոցովի կազմակերպմամբ: Տարվա ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները մեծապես պայմանավորվել էին այս հանգամանքով:

Փետրվարի 16-ին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանն ու ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանն ընդունել են աշխատանքային այցով Հայաստանում գտնվող Ղազախստանի Հանրապետության պետական քարտուղար - ԱԳ նախարար, ԵԱՀԿ գործող նախագահ Կանատ Սաուդաբաևին:

Մարտի 12-ին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանն ու Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանն ընդունել են ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Ժառո Սոարեշին եւ նրա գլխավորած պատվիրակությանը:

Հուլիսի 17-ին Ղազախստանի Ալմաթի քաղաքում արտգործնախարար Նալբանդյանը մասնակցել է ԵԱՀԿ արտգործնախարարների ոչ պաշտոնական հանդիպմանը, որին հանդես է եկել ելույթով՝ ներկայացնելով Հայաստանի տեսակետները Եվրոպայում անվտանգության ապահովման վերաբերյալ:

Նախարարական հանդիպման շրջանակներում կայացել է նաեւ Հայաստանի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Միացյալ Նահանգների եւ Ադրբեջանի պատվիրակությունների ղեկավարների հանդիպումը, որի ընթացքում քննարկվել են դարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացի վերջին զարգացումները: Դեկտեմբերի 1-2-ը Աստանայում կայացել է ԵԱՀԿ գազաթափոցովը, որին մասնակցել է ելույթով հանդես է եկել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը:

ԵԱՀԿ Աստանայի գազաթափոցովն ընդունել է հռչակագիր, որում այլ հարցերի շարքում, անդրադարձ է կատարվել նաեւ հակամարտությունների լուծմանը՝ ընդգծելով դրանց խաղաղ կարգավորումը՝ համաձայնեցված ձեւաչափերում, միջազգային իրավունքի նորմերի համաձայն: Կոչ է արվել գերծ մնալ ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումից՝ ՄԱԿ-ի կանոնադրության եւ Հելսինկիի եզրափակիչ ակտի սկզբունքներին համապատասխան:

Բացի վերոնշյալ հանդիպումներից 2010 թ. ընթացքում ՀՀ ԱԳ նախարարը աշխատանքային հանդիպումներ է ունեցել նաեւ ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակի /ԺՀՄԻԳ/ ղեկավար Յանեշ Լենարչիչի, ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովում Իտալիայի պատվիրակության ղեկավար, քաղաքական եւ անվտանգության հարցերով գլխավոր կոմիտեի զեկուցող, Իտալիայի խորհրդարանի արտաքին գործերի հանձնաժողովի անդամ, Ռիկարդո Մալիորիի, ինչպես նաեւ ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի պատվավոր նախագահ, Ստոկհոլմի միջազգային խաղաղության ուսումնասիրման ինստիտուտի գործադիր խորհրդի նախագահ Գորան Լենմարկերի հետ:

Մայիսի 18-ին Հայաստան է այցելել մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչ Դունյա Միլատովիչը, որին ընդունել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը:

Եվրոպայի Խորհուրդ

Հայաստան-Եվրոպայի Խորհուրդ հարաբերությունները 2010թ. զարգացել են բնականոն ընթացքով: Հայաստանը շարունակել է իր անդամակցությունից, ինչպես նաև տարբեր կոնվենցիաներից բխող պարտավորությունների կատարման գործընթացը: Շարունակվել է Հայաստանի ակտիվ ներգրավվածությունը կազմակերպության համար կենսական նշանակություն ունեցող բարեփոխումների գործընթացներում՝ մասնավորապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի եւ Նախարարների կոմիտեի աշխատանքների արդյունավետության բարձրացմանը վերաբերող հարցերի շուրջ:

Մայիսի 11-ին Ստրասբուրգում կայացել է ԵԽ նախարարների կոմիտեի հերթական 120-րդ նիստը, որին մասնակցել է ՀՀ ԱԳ նախարար Է. Նալբանդյանի գլխավորած պատվիրակությունը:

Հաշվետու տարին նշանավորվեց հոկտեմբերի 19-21-ը Երեւանում ՀՀ ԱԳՆ եւ Եվրոպայի Խորհրդի կողմից կազմակերպված ԵԽ “Հանուն ժողովրդավարության ապագայի ֆորումի” 6-րդ համաժողովի անցկացմամբ: Ֆորումին ներկա են եղել ԵԽ անդամ երկրների հայտնի քաղաքական ու հասարակական գործիչներ, ինչպես նաև գիտական շրջանակների ու ԶԼՄ-ների ներկայացուցիչներ: Անդամակցությունից ի վեր՝ սա Հայաստանում անցկացված ամենախոշոր ու կարեւոր ԵԽ միջոցառումն էր, որն, ըստ մասնակիցների արձագանքների, անցել է բարձր մակարդակով:

Պաշտոնական այցով Երեւան է այցելել ԵԽ գլխավոր քարտուղար Թորբյորն Յագլանդը, որը հանդիպումներ է ունեցել ՀՀ Նախագահի, ԱԺ Նախագահի եւ ԱԳ նախարարի հետ, ինչպես նաև ելույթ է ունեցել “Հանուն ժողովրդավարության ապագայի ֆորում”-ում:

2010 թ. շարունակվել է Հայաստանի համագործակցությունը կազմակերպության խորհրդարանական հարթությունում: ԵԽԽՎ-ում ՀՀ ԱԺ պատվիրակությունն ակտիվորեն մասնակցել է վեհաժողովի աշխատանքներին: Պատվիրակության եւ ԱԳՆ-ի ուշադրության կենտրոնում են եղել ինչպես անմիջապես Հայաստանին վերաբերող, այնպես էլ ԵԽԽՎ ընդհանուր օրակարգային հարցերը: Շարունակվել է Հայաստանի համագործակցությունը ԵԽԽՎ Հայաստանի հարցով համազեկուցողների հետ:

Եվրոպական երկրներ

2010 թ. ընթացքում հետեւողական աշխատանք է իրականացվել եվրոպական երկրների հետ տարբեր ոլորտներում երկկողմ հարաբերությունների ամրապնդման եւ զարգացման ուղղությամբ: ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանն այցելել է Ֆրանսիա, Գերմանիա, Միացյալ Թագավորություն եւ Բելգիա:

Եվրոպական երկրների հետ միջխորհրդարանական կապերի ամրապնդման տեսանկյունից կարեւոր էր ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի գլխավորած խորհրդարանական պատվիրակության պաշտոնական այցը Շվեյցարիայի Համադաշնություն, Հունաստան ու Կիպրոս:

2010 թ. տեղի են ունեցել ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի պաշտոնական եւ աշխատանքային այցերը մի շարք եվրոպական երկրներ, այդ թվում՝ Միացյալ Թագավորություն, Նորվեգիա, Գերմանիա, Պորտուգալիա, Շվեյցարիա, Բելգիա, Իսպանիա: Հայաստան են այցելել եւ երկրի բարձրաստիճան ղեկավարության հետ հանդիպումներ են ունեցել եվրոպական պետությունների բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում՝ Սլովենիայի նախագահ Դանիլո Թյիրքը, Լեհաստանի վարչապետ Դոնալդ Տուսկը, Չեխիայի վարչապետ Յան Ֆիշերը, Սլովակիայի ԱԳ նախարար Միլոսլավ Լայչակը, Լեհաստանի ԱԳ նախարար Ռադոսլավ Սիկորսկին, Ավստրիայի ԱԳ նախարար Միխայել Շպինդելեգերը, Ֆինլանդիայի ԱԳ նախարար Ալեքսանդր Ստուբբը:

Տեղի են ունեցել քաղաքական խորհրդակցություններ ՀՀ ու Բուլղարիայի, Լեհաստանի, Սերբիայի, Սլովենիայի, Ռումինիայի, Շվեյցարիայի, Խորվաթիայի, Լատվիայի, Լյուքսեմբուրգի ԱԳՆ-ների միջեւ:

2010 թ. Երեւանում տեղի ունեցավ հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության երկրորդ համաժողովը:

2010 թ. ընթացքում եվրոպական երկրների հետ ստորագրվել է 18 երկկողմ համաձայնագիր (Ֆրանսիայի, Նորվեգիայի, Իտալիայի, Էստոնիայի, Լեհաստանի, Չեխիայի, Սլովակիայի, Սլովենիայի եւ Հունգարիայի հետ), 3 փոխընթացման հուշագիր (Նիդեռլանդների, Ավստրիայի եւ Ռումինիայի հետ) եւ 2 արձանագրություն (Չեխիայի եւ Կիպրոսի հետ):

2010 թ. Հայաստանը դեսպանություններ է հիմնել Իսպանիայում, Չեխիայում եւ Նիդեռլանդներում:

ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՆԵՐ

ՎՐԱՍՏԱՆ

2010 թ. Հայաստանի եւ Վրաստանի միջեւ կայացել են մի շարք բարձրաստիճան շփումներ, այդ թվում՝ հունվարի 26-ին Վրաստանի վարչապետ Ն. Գիլաուրիի աշխատանքային այցը Հայաստանի Հանրապետություն, փետրվարի 22-23-ը ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի աշխատանքային այցը Վրաստան, հունիսի 13-15-ը ՀՀ ԱԳ նախարար Է. Նալբանդյանի աշխատանքային այցը Վրաստան, իսկ սեպտեմբերի 3-4-ը Վրաստանի ԱԳ նախարար Գ. Վաշաձեի աշխատանքային այցը ՀՀ:

Հայ-վրացական բանակցությունների ընթացքում մշտապես քննարկվել են վիրահայությանը հուզող խնդիրները:

2010թ. մարտի 1-ին, Հայաստանի միջնորդությամբ ընթացած բանակցությունների արդյունքում, վերաբացվել է Վրաստանի եւ ՌԴ միջեւ ավտոմոբիլային “Կազբեգի”-“Վերին Լարս” սահմանային անցակետը, որը չէր գործում 2006թ. օգոստոսից:

ԻՐԱՆ

Հաշվետու ժամանակաշրջանը հայ-իրանական հարաբերությունների համագործակցության առումով նշանավորվել է մի շարք գերատեսչությունների միջեւ տեղի ունեցած փոխադարձ այցերի առատությամբ եւ շփումներով: Իրան են այցելել Հայաստանի պաշտպանության, կրթության եւ գիտության, էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարները:

Տարվա ընթացքում տեղի ունեցած կարեւորագույն իրադարձություններից էր 2010 թ. հոկտեմբերի 25-26-ը ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի գլխավորած պատվիրակության Թեհրան կատարած այցը: Հոկտեմբերի 8-10-ը Երեւան ժամանեց ԻԻՀ մեջլիսի նախագահ Ալի Լարիջանիի գլխավորած պատվիրակությունը:

Հաջողությամբ շարունակվել են հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի աշխատանքները: 2010 թ. հունվարի 26-27-ը Երեւանում տեղի ունեցավ ՀՀ եւ ԻԻՀ միջկառավարական հանձնաժողովի հերթական՝ 9-րդ նիստը, որին մասնակցելու նպատակով Երեւան էր ժամանել ԻԻՀ ԱԳ նախարար Մ. Մոթթաքին:

Քաղաքական խորհրդակցություններ անցկացնելու նպատակով 2010 թ. սեպտեմբերի 15-16-ը Թեհրանում էր գտնվում ՀՀ ԱԳ նախարար Է. Նալբանդյանի գլխավորած պատվիրակությունը:

ԹՈՒՐԿԻԱ

Անցած տարի Թուրքիան ուժ չգտավ իր մեջ հարգելու իր պարտավորությունները եւ հանդես եկավ որպես անվստահելի գործընկեր: Թուրքիան ոչ միայն չվավերացրեց հայ-թուրքական արձանագրությունները, այլեւ վերադարձավ այն նախապայմանների լեզվին, որը նա օգտագործում էր մինչեւ գործընթացի մեկնարկը:

Ապրիլի 22-ին ՀՀ Նախագահը որոշում կայացրեց կասեցնել արձանագրությունների վավերացման ընթացակարգը՝ առայժմ դուրս չգալով գործընթացից, որը լիակատար ըմբռնում եւ աջակցություն ստացավ միջազգային հանրության կողմից:

ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ԵՎՐԱԶԵՍ

2010 թ. ընթացքում կայացավ ԱՊՀ մասնակից պետությունների ղեկավարների խորհուրդը (ղեկտեմբերի 10-ին Մոսկվայում) եւ 2 ոչ պաշտոնական հանդիպում (մայիսի 8-ին Մոսկվայում եւ հուլիսի 10-ին Յալթայում), ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի 2 նիստ (մայիսի 21-ին եւ նոյեմբերի 19-ին Սանկտ-Պետերբուրգում) եւ ԱՊՀ

արտաքին գործերի նախարարների խորհրդի 2 նիստ (մարտի 26-ին եւ դեկտեմբերի 9-ին Մոսկվայում):

Տարվա ընթացքում նախապատրաստվել եւ ստորագրվել են տնտեսական, ռազմական, քաղաքական, հումանիտար, սոցիալական եւ այլ ոլորտների վերաբերյալ փաստաթղթեր, ինչպես նաեւ համապատասխան ծրագրեր՝ միտված նշյալ ոլորտների շրջանակներում ընդունված որոշումների իրականացմանը:

Հատուկ ուշադրության է արժանացել ազատ առևտրի գոտուն վերաբերող պայմանագրի նախապատրաստումը եւ ԱՊՀ հետագա զարգացման հայեցակարգի իրականացմանն ու համագործակցության արդյունավետության բարձրացմանը նպաստող այլ փաստաթղթեր:

Կարևոր իրադարձություններից էին Հայրենական Մեծ պատերազմի 65-րդ տարելիցի կապակցությամբ միջոցառումների անցկացումը:

2010 թ. ապրիլի 8-10-ը Երեւանում կայացավ հայ-թուրքմենական միջկառավարական հանձնաժողովի երկրորդ նիստը: Նույն օրերին Երեւանում անցկացվեցին նաեւ հայ-թուրքմենական բիզնես-ֆորում, ինչպես նաեւ թուրքմենական ապրանքների ցուցահանդես-վաճառք:

Ս.թ. նոյեմբերի 24-25-ը կայացավ Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնական այցը Թուրքմենստան: Ստորագրվեց հինգ փաստաթուղթ եւ համատեղ կոմյունիկե: Նույն օրերին անց է կացվել բիզնես-ֆորում եւ հայկական արտադրանքի ցուցահանդես:

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում հուլիսի 5-ին մասնակցել է Եվրասիական տնտեսական ընկերակցության / ԵվրԱզԷՍ / միջպետական խորհրդի նիստին, իսկ դեկտեմբերի 1-ին ԵԱՀԿ 7-րդ գագաթնաժողովին:

2010 թ. մայիսի 21-ին Սանկտ-Պետերբուրգում կայացավ ԵվրԱզԷՍ-ի Միջպետական խորհրդի հերթական նիստը, որին մասնակցեց ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը:

2010 թ. հուլիսի 4-6-ը Աստանայում տեղի ունեցավ ԵվրԱզԷՍ-ի Միջպետական խորհրդի /պետությունների ղեկավարների մակարդակով/ 27-րդ նիստը, որին մասնակցեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ղեկավարած պատվիրակությունը:

2010թ. նոյեմբերի 19-ին Սանկտ Պետերբուրգում կայացավ ԵվրԱզԷՍ-ի Միջպետական խորհրդի 28-րդ նիստը կառավարությունների ղեկավարների մակարդակով: Նիստին մասնակցեց ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը:

2010 թ. աշխատանքային այցելություններով Հայաստան են ժամանել Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն, Ղազախստանի Նախագահ Նուրսուլթան Նազարբաևը, Ղրղզստանի Նախագահ Ռոզա Օթունբաևան եւ Տաջիկստանի Նախագահ Էմոմալի Ռահմոնը:

2010 թ. Հայաստանը Ղրղզստանում մայիսին տեղի ունեցած զանգվածային անկարգությունների հետևանքով առաջացած ճգնաժամի հաղթահարման ջրջանակներում հասկացրեց հումանիտար օգնություն:

2010 թ. փետրվարին հայ-ուկրաինական հարաբերություններում ի հայտ եկան նոր հնարավորություններ՝ երկկողմ քաղաքական երկխոսությունը եւ միջպետական համագործակցությունը տեղափոխելու որակական նոր դաշտ: Երկկողմ ձեւաչափով ՀՀ եւ Ուկրաինայի Նախագահներն ունեցել են 2 հանդիպում /Կիեւ՝ փետրվարի 25-ը, Յալթա՝ հունիսի 10-ը/: ՀՀ եւ Ուկրաինայի ԱԳ նախարարներն ունեցել են 2 հանդիպում /Մոսկվա՝ մարտին, Մոնտրո՝ հոկտեմբերի 23/: Ակտիվացել է երկու երկրների միջեւ ապակենտրոնացված համագործակցությունը: Համագործակցության հուշագրեր են ստորագրվել Խարկովի եւ Տավուշի մարզերի, Խարկովի եւ Լոռու մարզերի միջեւ: Ընթացիկ տարում երկուստեք քայլեր են ձեռնարկվել հայ-բելառուսական հարաբերությունների հեռանկարային ծրագրերի մշակման ու իրականացման ուղղությամբ: 2010թ. փետրվարին, Երեւանում կայացավ ՀՀ ԱԺ եւ ԲՀ ԱԺ միջեւ համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովի 4-րդ նիստը: 2010 թ. սեպտեմբերի 30-ին Երեւանում բացվեց հայ-բելառուսական «Ար-Բել» առևտրային տունը: 2010թ. դեկտեմբերի 2-ին կայացավ Բելառուսի գործարարների պատվիրակության այցը Հայաստան:

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ

2010 թ. նշանավորվել է Հայաստանի եւ մի շարք արաբական երկրների հետ միջխորհրդարանական համագործակցության ամրապնդման առումով եւ բարձր մակարդակի այցելություններով:

2010 թ. մարտի 22-24-ը տեղի է ունեցել ՀՀ Նախագահի պաշտոնական այցելությունը Սիրիայի Արաբական Հանրապետություն: ՀՀ Նախագահի այցի ընթացքում ստորագրվել են համագործակցության զանազան ոլորտներին առնչվող 10 երկկողմ համաձայնագրեր:

ՀՀ Նախագահի գլխավորած պատվիրակությունն այցելել է նաեւ Հալեպ եւ Դեյր Ջոր:

Հունվարի 16-18-ը ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանն այցելել է Եգիպտոսի Արաբական Հանրապետություն, ապրիլի 11-14-ը Լիբանանի Հանրապետություն, իսկ նոյեմբերի 22-25-ը Սիրիայի Արաբական Հանրապետություն:

2010 թ. հունիսի 1-3-ը տեղի է ունեցել ՀՀ Էկոնոմիկայի նախարարի, Երեւանի քաղաքապետի այցը Եգիպտոսի Արաբական Հանրապետություն:

Հուլիսի 24-25-ը կայացել է Քուվեյթի ֆինանսների նախարար Մուստաֆա Ջասեմ ալ-Շամալիի այցը Հայաստան:

Սեպտեմբերի 20-21-ը Հայաստան այցելեց Եգիպտոսի ԱԳ նախարարի տեղակալ, ԱՊՀ երկրների հետ տեխնիկական համագործակցության եգիպտական հիմնադրամի գլխավոր քարտուղար Սոմեյա Սաադը:

2010 թ. սեպտեմբերին Եգիպտոսում, իսկ այնուհետև Սիրիայում տեղի ունեցան Հայաստանի մշակութային օրերը:

2010 թ. նպատակ ունենալով անմիջական մասնակցություն բերել Իրաքի վերականգնման եւ կայունացման գործընթացին՝ հոկտեմբերին Հայաստանը վերաբացեց իր դեսպանությունը Բաղդադում:

2010 թ. նոյեմբերի 2-5-ը ՀՀ ժամանեց ԱՄԷ արտաքին առևտրի նախարար տիկին Լուբնա Ալ-Կասիմին՝ 40 գործարարների ուղեկցությամբ:

2010 թ. Քուվեյթում հիմնադրվել է ՀՀ դեսպանությունը:

ԿԱՆԱԴԱ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

2010 թ. հայ-կանադական հարաբերություններում արձանագրվել է զգալի աշխուժություն, հատկապես՝ երկկողմ շփումների տեսանկյունից: Առաջընթաց է նկատվել քաղաքական խնդիրների շուրջ երկու երկրների միջև երկխոսությունն ընդլայնելու եւ առևտրատնտեսական համագործակցությունը խթանելու ուղղությամբ:

2010 թ. մայիսի 30-ից հունիսի 1-ը պաշտոնական այցով Կանադա է այցելել ՀՀ ԱԳ Նախարար Է. Նալբանդյանը: Հանդիպումներ են կայացել Կանադայի օրենսդիր եւ գործադիր իշխանությունների բարձրաստիճան ներկայացուցիչների հետ:

Սեպտեմբերին ՀՀ է այցելել Կանադայի խորհրդարանական պատվիրակությունը՝ “Կանադա-Հայաստան” բարեկամության խմբի նախագահ Հ. Ալբրեխտի գլխավորությամբ: Հոկտեմբերին տեղի է ունեցել Մոնրեալի քաղաքապետի պատասխան այցը Երևան:

2010 թ. ընթացքում շարունակվեցին զարգանալ ավանդական սերտ հարաբերություններն Արգենտինայի, Բրազիլիայի եւ Ուրուգվայի հետ՝ առևտրական, տնտեսական, միջխորհրդարանական, մշակութային եւ այլ բնագավառներում:

2010 թ. մայիսի 20-22-ը Արգենտինայի արտաքին հարաբերությունների, պաշտամունքի եւ միջազգային առևտրի նախարար Խորխե Տայանան այցելեց Հայաստան: Մայիսի 21-ին Հայաստանի եւ Արգենտինայի ԱԳ նախարարների մասնակցությամբ տեղի ունեցավ Երևանում Արգենտինայի դեսպանության բացման արարողությունը:

Հումանիտար համագործակցության շրջանակներում ՀՀ կառավարությունը որոշում է կայացրել Հայիթիում տեղի ունեցած աղետալի երկրաշարժի հետևանքները վերացնելու նպատակով հատկացնել 100.000 ԱՄՆ դոլար:

2010 թ. Բրազիլիայում հիմնադրվել է ՀՀ դեսպանություն:

ԱՍԻԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆ

2010 թ. ակտիվ էր Հայաստանի եւ Չինաստանի միջեւ հարաբերությունների զարգացման տեսանկյունից:

Չինաստան այցելեց ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանը, որը հանդիպեց ՉԺՀ Նախագահ Հու Չինթաոյի հետ, մասնակցեց Չինաստանի Շանսի նահանգում “Շանսի-Նաիրիտ” հայ-չինական համատեղ ձեռնարկության գործարկման արարողությանը, ինչպես նաեւ “Շանհայ Էքսպո-2010” միջազգային ցուցահանդեսի բացմանը:

ՀՀ վարչապետ Տ. Սարգսյանը սեպտեմբերին այց կատարեց Չինաստան, որի ընթացքում հանդիպեց ՉԺՀ պետխորհրդի նախագահի առաջին տեղակալ Լի Կեցյանի հետ, մասնակցեց “Շանհայ Էքսպո-2010”-ում Հայաստանի Ազգային օրվա միջոցառումներին: 2010 թ. ապրիլին իրականացվել է ՉԺՀ խորհրդարանի Չինաստան-Հայաստան պատգամավորական բարեկամության խմբի ղեկավարի տեղակալ Լի Մինգյուի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան:

2010 թ. հոկտեմբերին իրականացվել է ՀՀ առողջապահության նախարար Հարություն Քուշկյանի այցը Չինաստան:

2010 թ. նոյեմբերին պաշտոնական այցով Հնդկաստան այցելեց արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը: Այցի շրջանակներում հանդիպումներ կայացան Հնդկաստանի փոխնախագահ, խորհրդարանի վերին պալատի նախագահ Մոհամադ Համիդ Անսարի, ԱԳ նախարար Սոմանահալլի Մալլայահ Կրիշնայի հետ: Պայմանավորվածություններ ձեռք բերվեցին համագործակցության ամրապնդման եւ զարգացման վերաբերյալ:

Նոյեմբերի 17-ին ՀՀ ԱԳ եւ Ճապոնիայի ԱԳ միջեւ առաջին անգամ Երեւանում անցկացվեցին հայ-ճապոնական քաղաքական խորհրդակցություններ:

Մարտի 29-30-ը Երեւանում էր գտնվում Ճապոնիայի արտաքին առևտրի կազմակերպության (JETRO) գործադիր տնօրեն Ռյուիչի Հատորին:

Հայ-ճապոնական համագործակցությունը շարունակել է զարգանալ նաեւ Հայաստանին Ճապոնիայի կողմից հատկացվող պաշտոնական օգնության (ODA) ծրագրերի շրջանակներում:

Սեպտեմբերի 4-29-ը Հայաստան էր ժամանել Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության /JICA/ աշխատանքային թիմը՝ Հայաստանի Հանրապետության սեյսմիկ ռիսկի գնահատման եւ կառավարման պլանավորման ծրագրի վերաբերյալ փորձագիտական աշխատանքները շարունակելու նպատակով:

Տեխնիկական համագործակցության շրջանակներում /JICA/ Ճապոնիա է գործուղվել ավելի քան 30 հայ մասնագետ՝ ՀՀ տարբեր գերատեսչություններից:

2010 թ. Ճապոնիայում հիմնադրվեց Հայաստանի դեսպանությունը:

2010 թ. Մոսկվայում մայիսին տեղի ունեցած Երկրորդ համաշխարհային պատերազմում Հաղթանակի օրվա միջոցառումների շրջանակներում ՀՀ Նախագահի հանդիպումը Վիետնամի ՍՀ Նախագահի հետ, որի ընթացքում քննարկվել են երկկողմ հարաբերությունների հետագա զարգացմանը վերաբերող հարցեր:

Հունիսի 7-ին Հայաստանի Հանրապետության եւ Ֆիջիի կղզիների Հանրապետության միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱԿ

2010 թ. սեպտեմբերի 20-26-ը ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 65-րդ նստաշրջանին, այդ թվում նաև սեպտեմբերի 20-22-ը՝ Հազարամյակի զարգացման նպատակներին նվիրված բարձրաստիճան հանդիպմանը: Հայաստանի արտգործնախարարը ծրագրային ելույթներով հանդես է եկել Գլխավոր ասամբլեայի վերոհիշյալ նիստերին: Իր այցի շրջանակներում ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպումներ է ունեցել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի-մունի, Գլխավոր ասամբլեայի նախագահի, ԱՄՆ պետքարտուղարի տեղակալի, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների, Էստոնիայի, Թունիսի, Իրանի Իսլամական Հանրապետության, Իրաքի, Լիտվայի, Խորվաթիայի, Հունաստանի, Հունգարիայի, Կանադայի, Կիպրոսի, Կոստովոյի, Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության, Սինգապուրի, Սիրիայի Արաբական Հանրապետության, Սլովենիայի, Վրաստանի եւ Օմանի իր գործընկերների հետ: ՀՀ ԱԳ նախարարը մասնակցել է նաև ՀԱՊԿ անդամ երկրների նախարարների հանդիպմանը:

ՀՀ մասնակցությունը ՄԱԿ-ի տարբեր մարմիններում

Հաշվետու տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունը շարունակել է իր հետեւողական քաղաքականությունը ՄԱԿ-ի տարբեր հանձնաժողովների եւ կոմիտեների գործադիր մարմիններում, մասնավորապես՝ Կանանց կարգավիճակի հանձնաժողովում, Միջազգային առևտրի իրավունքի հանձնաժողովում (UNCITRAL), Ծրագրման եւ համակարգման կոմիտեում, Վիճակագրության հանձնաժողովում, ՄԱԿ-ի բնակավայրերի ծրագրի ղեկավար խորհրդում (UN-Habitat):

2010 թ. ընթացքում շարունակվել են աշխատանքները միջազգային տարբեր ատյաններում մարդու իրավունքների հարցերին վերաբերող ՀՀ քաղաքականության, այդ թվում այնպիսի գերակա խնդիրների ներկայացման ուղղությամբ, ինչպիսիք են՝ ԼՂ հիմնահարցը եւ Հայոց ցեղասպանության ճանաչումը:

2010 թ. մայիսին Հայաստանի Հանրապետությունն առաջին անգամ անցավ Մարդու իրավունքների խորհրդի կողմից սահմանված նոր ընթացակարգը՝ Համընդհանուր պարբերական դիտարկումը:

2010 թ. Հայաստանը վավերացրեց մարդու իրավունքների ոլորտում մեծ կարելություն ունեցող ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան:

2010 թ. մայիսի 10-14-ը Երևանում տեղի ունեցավ ՄԱԿ –ի Պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպության Գյուղատնտեսության եվրոպական հանձնաժողովի 36-րդ նստաշրջանը եւ Եվրոպական տարածաշրջանային 27-րդ համաժողովը:

2010 թ. Երևանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հռչակվեց 2012 թվականի գրքի համաշխարհային մայրաքաղաք:

Նոյեմբերի 17-ին Նայրոբիում (Քենիա) կայացած ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման կոմիտեի 5-րդ նիստի ընթացքում որոշվեց «Հայկական խաչքարի արվեստը, խաչքարի խորհուրդը եւ խաչքարագործությունը» ընդգրկել ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության հեղինակավոր ցանկի մեջ:

2010-2011թթ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի հոբելյանական օրակարգում ընդգրկվել են հայ միջնադարյան մշակույթի մեծագույն մանրանկարիչ Թորոս Ռոսլինի ծննդյան 800-ամյակը եւ պատմիչ Մովսես Խորենացու ծննդյան 1600-ամյակը:

Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպություն

2010 թ. մարտից-ապրիլ Ֆրանկոֆոնիայի ամսվա շրջանակներում Հայաստանում կազմակերպվեցին շուրջ 3 տասնյակ միջոցառումներ:

Ապրիլին Հայաստան այցելեց Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գլխավոր քարտուղար Աբդու Դիուֆը: Այցի ընթացքում հանդիպումներ կայացան ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

ՀՀ ԱԳ նախարարը հոկտեմբերին մասնակցեց Մոնթրոյում կայացած Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գագաթաժողովին, որի Եզրափակիչ փաստաթղթում առաջին անգամ ընդգրկվեց արցախյան հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ դրույթ, որը աջակցություն է հայտնում ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ընթացող հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացին:

ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստան-ՀԱՊԿ

2010 թ. օգոստոսի 20-22-ը Երեւանում անցկացվեց ՀԱՊԿ անդամ երկրների ոչ պաշտոնական գագաթաժողովը, որի կարեւոր ձեռքբերումներից էր կազմակերպությունը ճգնաժամային արձագանքման առավել արդյունավետ մեխանիզմով օժտելու մասին պայմանավորվածությունը:

2010 թ. մայիսի 8-9-ը ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանն այցելեց Մոսկվա՝ ՀԱՊԿ անդամ պետությունների ոչ պաշտոնական գագաթաժողովին:

Տարվա ընթացքում ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորոյուժան այցելություններ է կատարել Հայաստան, հանդիպումներ ունեցել երկրի բարձրաստիճան ղեկավարների հետ:

Պեկտեմբերի 10-ին Մոսկվայում կայացած ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի նիստի ընթացքում այդ, ինչպես նաև հավաքական անվտանգության համակարգի միջոցների եւ ուժերի ձեւավորման ու կիրառման կատարելագործմանը եւ ռազմաարդյունաբերական ոլորտում համագործակցության հետագա ընդլայնմանն առնչվող համաձայնություններն ամրագրվեցին համապատասխան իրավական փաստաթղթերով:

2010 թ. ընթացքում տեղի են ունեցել ՀԱՊԿ անդամ պետությունների արտաքին գործերի նախարարների երկու պաշտոնական՝ մարտին եւ դեկտեմբերին Մոսկվայում եւ երկու ոչ-պաշտոնական հանդիպում. սեպտեմբերին՝ Նյու Յորքում, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 65-րդ նստաշրջանի նախօրեին, եւ դեկտեմբերին՝ Աստանայում, ԵԱՀԿ գագաթաժողովի նախօրեին, որոնց ընթացքում նախարարները քննարկել են տվյալ միջազգային կազմակերպությունների օրակարգային հարցերի վերաբերյալ ՀԱՊԿ անդամ պետությունների դիրքորոշումները, ինչպես նաև ՀԱՊԿ օրակարգի կարեւորագույն հարցերը:

ՆԱՏՕ

2010 թ. ընթացքում կարեւորվել է համագործակցությունը ՆԱՏՕ-ի դաշնակից եւ գործընկեր պետությունների հետ ԳԻՄ օրակարգի բոլոր բնագավառներում: Հատուկ ուշադրության է արժանացել առանցքային նշանակություն ունեցող Հայաստան-ՆԱՏՕ ԱԳԳԾ արդյունավետ իրագործումը:

Մայիսի 25-ին Նախագահ Սերժ Սարգսյանը այցելել է ՆԱՏՕ-ի կենտրոնակայան, հանդիպել դաշինքի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոզ Ռասմուսսենին:

Հունվարի 28-ին Լոնդոնում կայացած Աֆղանստանին նվիրված համաժողովի աշխատանքներին մասնակցել է ՀՀ արտգործնախարար Է. Նալբանդյանի գլխավորած պատվիրակությունը: Մայիսի 12-ին Բրյուսելում կայացել է Հյուսիսատլանտյան Խորհուրդ-Հայաստան ամենամյա հանդիպումը, որին մասնակցել են ՀՀ ԱԳ եւ պաշտպանության նախարարները:

Նոյեմբերի 20-ին Լիսաբոնում կայացել է Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցման ուժերին ներդրում կատարող ՆԱՏՕ-ի ոչ անդամ երկրների ղեկավարների հանդիպումը, որին մասնակցել է ՀՀ ԱԳ եւ պաշտպանության նախարարների գլխավորած պատվիրակությունը:

Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցման ուժերի կազմում ՆԱՏՕ-ի առաքելությանը մասնակցելու նպատակով փետրվարի 14-ին Կունդուզ քաղաք է ժամանել ՀՀ ԶՈւ խաղաղապահ ստորաբաժանումը:

Սեպտեմբերի 11-16-ը Հայաստանում կայացել է Ադետների արձագանքման եվրատլանտյան համակարգման կենտրոնի (EADRCC) «Արմենիա- 2010» վարժանքը:

Սովորական սպառազինությունների վերահսկման խնդիրներ

ՀՀ ԱԳՆ հետեւողականորեն շարունակել է տարբեր միջազգային ատյաններում բարձրացնել Ադրբեջանի կողմից ԵՍԶՈԻ պայմանագրով նախատեսված սովորական սպառազինությունների առաստաղների գերազանցման խնդիրը:

2010 թ. ընթացքում ԱԳ նախարարությունը ակտիվ մասնակցել է ԵԱՀԿ գազաթաժողովի նախապատրաստական աշխատանքներին, մասնավորապես, ԵԱՀԿ ռազմաքաղաքական հարցերի վերանայման, արդիականացման եւ համապատասխանեցման վերաբերյալ:

Գլոբալ անվտանգության եւ ոչ կոնվենցիոնալ խնդիրներ

2010 թ. ապրիլի 11-13-ը Վաշինգտոնում կայացած Գլոբալ միջուկային անվտանգության հարցերով գազաթաժողովին մասնակցել է եւ ելույթ է ունեցել ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը:

Ս.թ. սեպտեմբերի 20-24-ը Հայաստանի պատվիրակությունը մասնակցել է Ատոմային Էներգիայի միջազգային գործակալության 54-րդ տարեկան համաժողովին:
Կենսաբանական զենքի մասին կոնվենցիայի (ԿՁԿ) անդամ պետությունների 2010 թ. դեկտեմբերին կայացած ամենամյա հանդիպմանը Հայաստանն առաջին անգամ այս ձեւաչափում հանդես եկավ զեկույցով, որում ներկայացվեց կենսաբանական վտանգների եւ համաճարակների կանխարգելման եւ հակազդման ազգային համակարգը (հարավկովկասյան երկրներից միակը):

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 7-9-ը Սոֆիայում տեղի է ունեցել Սեւծովյան Տնտեսական Համագործակցության Կազմակերպություն անդամ-երկրների գիտության եւ տեխնոլոգիաների բնագավառի պատասխանատու նախարարների հանդիպումը եւ համապատասխան աշխատանքային խմբի նիստը, իսկ ապրիլի 14-15-ը կայացել է ՄՕՏՀ անդամ-երկրների տրանսպորտի

նախարարների եւ փորձագետների աշխատանքային խմբի հանդիպումները, որոնց մասնակցել են ՀՀ պատվիրակությունները:

Մայիսի 28-ին Հայաստանի պատվիրակության մասնակցությամբ Սոֆիայում անցկացվել է ՄՕՏՀ ԱԳ նախարարների խորհրդի հանդիպումը:

Նոյեմբերի 26-ին Սալոնիկում տեղի ունեցավ ՄՕՏՀ անդամ երկրների Արտգործնախարարների խորհրդի 23-րդ հանդիպումը, որին նոյեմբերի 24-25-ը նախորդեց ՄՕՏՀ Ավագ պաշտոնյաների կոմիտեի նիստը: ՀՀ պատվիրակությունը գլխավորում էր եւ ելույթով հանդես եկավ ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Սերգեյ Մանասարյանը:

Դեկտեմբերի 2-5-ը Սալոնիկում տեղի ունեցան Սեւծովյան առեւտրի եւ զարգացման բանկի Տնօրենների խորհրդի եւ Կառավարիչների խորհրդի նիստերը, որոնց մասնակցեց ՀՀ պատվիրակությունը:

Ապրիլի 14-16-ը Կիևում կայացել է “Կովկասի եւ ԱՊՀ արեւմտյան երկրների միջազգային լոգիստիկ կենտրոններ” նախագծի աշխատանքային հանդիպումը՝ Հայաստանի պատվիրակության մասնակցությամբ

Մայիսի 11-ին Թբիլիսիում կայացել է TRACECA ծրագրի տարածաշրջանային ամփոփիչ խորհրդակցությունը, որի ընթացքում քննարկվել են TRACECA-ի ենթակառուցվածքային ներդրումային նախագծերի նախնական ցուցակի հետ կապված հարցեր: Հայաստանի կողմից առաջարկված նախագծերի սկզբնական ցուցակից ընտրվել են “Հյուսիս-Հարավ ավտոճանապարհային միջանցք” եւ “Հայկական երկաթուղու ենթակառուցվածքի վերականգնում” ներդրումային նախագծերը:

Մայիսի 25-27-ը Անթալիայում անցկացվել է “TRACECA երթուղիների մրցունակություն եւ աջակցություն առեւտրին” խորագրով բարձր մակարդակի հանդիպումը, որին մասնակցել է Հայաստանի պատվիրակությունը:

Հունիսի 22-24-ը Վաշինգտոնում տեղի ունեցավ Արբանյակային հեռահաղորդակցության միջազգային կազմակերպության անդամ-երկրների 34-րդ կոնֆերանսը՝ ՀՀ պատվիրակության մասնակցությամբ:

Օգոստոսի 19-21-ը տեղի է ունեցել Միջազգային ճանապարհային տրանսպորտային միության (TIR) պատվիրակության այցը Հայաստան:

Սեպտեմբերի 14-16-ը Երեւանում “Արմենվալ” ծրագրի շրջանակներում տեղի է ունեցել հայ-բելգիական համատեղ գործարար համաժողով, որին մասնակցել են շուրջ 50 բելգիացի գործարարներ, ինչպես նաեւ Վալոնիայի արտահանման գործակալության եւ ՄԱԿ-ի Ինդուստրիալ զարգացման կազմակերպության (UNIDO) ղեկավար կազմի ներկայացուցիչներ:

ՄՓՅՈՒՌՔ

2010 թ. ընթացքում արտգործնախարարությունը շարունակել է աջակցել ՀՀ Սփյուռքի նախարարության ծրագրերի իրագործմանը:

Օտարերկրյա պետություններում ՀՀ դեսպանությունները եւ հյուպատոսական հիմնարկները համապատասխան աշխատանք են տարել հայկական համայնքների եւ կրթօջախների ներկայացուցիչների հետ՝ ՀՀ կրթության եւ գիտության 2010-2011 թվականների ուսումնական տարում սփյուռքահայ դիմորդների ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության հարցում:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՈՒՄ

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգում է:

2010 թ. մարտին Սիրիա ՀՀ Նախագահի պաշտոնական այցելության շրջանակներում, Նախագահը Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչմանը նվիրված ծրագրային ելույթով հանդես է եկել Դեյր Ջորում:

Ցեղասպանության հանցագործության կանխարգելման եւ պատժման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի համատեքստում, 2010 թվականի դեկտեմբերի 14-15-ը ՀՀ ԱԳՆ Երեւանում կազմակերպեց միջազգային գիտաժողով, որին մասնակցեցին ցեղասպանության հարցերով զբաղվող համաշխարհային ճանաչում ունեցող մի շարք գիտնականներ, հետազոտողներ եւ այլ մասնագետներ շուրջ երկու տասնյակ երկրներից:

Հայոց Ցեղասպանության 95-րդ տարելիցի կապակցությամբ շուրջ չորս տասնյակ երկրներում անց են կացվել ոգեկոչման եւ հիշատակի հարյուրավոր միջոցառումներ, որոնց իրենց աջակցությունն են ցուցաբերել ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում ունեցած ելույթում ՀՀ արտգործնախարարը բարձրաձայնել է Հայոց Ցեղասպանության մասին, մարդկության դեմ ոճրագործությունների կանխարգելման եւ դատարտման կարեւորությունը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ

2010 թ. ՀՀ Նախագահը հարցազրույցներ է տվել միջազգային մի շարք առաջատար լրատվամիջոցների, մասնավորապես՝ «Ալ Ջազիրա», «Եվրանյուզ», «Վեստի 24» հեռուստաընկերություններին, ֆրանսիական «Ֆիգարո», սիրիական «Al Watan» թերթերին, գերմանական «Շփիգել» պարբերականին եւ ուկրաինական «Պրոֆիլ» ամսագրին:

Հանրապետության նախագահը ծրագրային ելույթներով հանդես է եկել Լոնդոնի Chatham House կենտրոնում եւ Բեռլինի Կոնրադ Ադենաուեր հիմնադրամում:

Ընթացիկ տարում Հայաստանի արտաքին քաղաքականության, տնտեսության, մշակույթի մասին բազմաթիվ հոդվածներ են հրապարակվել եւ տեսանյութեր ցուցադրվել արտասահմանյան առաջատար լրատվամիջոցների կողմից.

Կազմակերպվել են միջազգային առաջատար լրատվամիջոցների նկարահանող խմբերի եւ թղթակիցների այցելություններ Հայաստան եւ Արցախ, որոնց արդյունքում նկարահանվել են ֆիլմեր, հրապարակվել եւ պատրաստվել են հարյուրավոր հոդվածներ եւ ռեպորտաժներ:

Լոնդոնում լույս տեսնող The European Times պարբերականը ամբողջական համար է նվիրել Հայաստանի տնտեսությանը:

2010թ. ՀՀ ԱԳ նախարարը Հայաստանի արտաքին քաղաքականության մասին ելույթներով հանդես է եկել Նորվեգիայի միջազգային հարաբերությունների ինստիտուտում, Գերմանիայի Արտաքին քաղաքականության խորհրդում, Օտտավայի Քարլթոն համալսարանում, Թաֆթս համալսարանի Ֆլեթչերի իրավունքի եւ դիվանագիտության դպրոցում, Հնդկաստանի Միջազգային հարաբերությունների խորհրդում, Իսպանիայի Club de Madrid եւ FRIDE քաղաքագիտական կենտրոններում:

ՀՀ ԱԳ նախարարը, նախարարի տեղակալները, դեսպաններն ու գլխավոր հյուպատոսները ելույթներ են ունեցել բազմաթիվ միջազգային համաժողովներում, քաղաքագիտական կենտրոններում կազմակերպված սեմինարներին, կլոր սեղաններին, տասնյակ հարցազրույցներ են տվել հեղինակավոր լրատվամիջոցների:

Արտգործնախարարը մասնակցել է մոտ երկու տասնյակ ասուլիսների, 15-ից ավելի հարցազրույցներ է տվել արտասահմանյան առաջատար լրատվամիջոցներին:

ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2010 թ. ընթացքում ստորագրվել է 70 միջազգային պայմանագիր, վավերացվել 63 միջազգային պայմանագիր, ուժի մեջ է մտել 74 միջազգային պայմանագիր:

ՀՀ ԱԳՆ նախաձեռնությամբ մշակվել, քննարկվել եւ/կամ ընդունվել է 5 օրենքի եւ 50-ին մոտ այլ իրավական ակտերի նախագծեր:

ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

2010թ. շարունակվել է աշխատանքն օտարերկրյա պետություններում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքների եւ շահերի պաշտպանության, ինչպես նաեւ այլ տարբեր հարցերում աջակցելու ուղղությամբ:

Հյուպատոսական ծառայության կողմից սպասարկվել է շուրջ 45000 Հայաստանի քաղաքացի, հյուպատոսական ծառայություններ են մատուցվել այլ երկրների մոտ 30000 քաղաքացիների:

Մեծ աշխատանք է տարվել հյուպատոսական ոլորտը կանոնակարգելու ուղղությամբ: Մշակվել եւ ընդունվել են 10-ից ավելի իրավական եւ նորմատիվ ակտեր, մի քանիսը մշակման փուլում են: Միաժամանակ քայլեր են արվում հյուպատոսական մի շարք ծառայություններ էլեկտրոնային դարձնելու ուղղությամբ:

* * *

Փոփոխություններ են կատարվել «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքում: ԱԳՆ-ում կառուցվածքային բարեփոխումներ են կատարվել:

ԱԳՆ համակարգում շրջանառվել է շուրջ 130.000 փաստաթուղթ: